

1862. Համաշխարհական դեռ Լօնգոնում։
 1865. Նոր պայմանակցութիւն վաճառականութեան Պրանսիայի և
 Զուցերիայի միջև։
 1867. Պարիզի հոչակառոր Համաշխարհական դեռը,
 (Թարգմ.) Ս. Բէկ - նազարեանց.

ԽԵՐԱԳՐԻ - ԱՆԴԱՆ ԱՐԱՐԱԿ ամսագրույ.

Ահա մի նոր 11 տող բեկուածել արձանագրութիւն ևս՝ որ միջոցաւ
 Վեորդ վարժապետի Տէր Յարութիւնեան Գիլիջանցոյ՝ ձեռք բերի Շի-
 րակայ գաւառի Ղուլի - ջան անունով Հայարնակ զիւղի Հարաւային
 կողմի վատակի եղերքումն, զոր տալով Խմբագրութեանդ խնդրեմ տպա-
 գրութեամբ հրատարակել Հնախուղից հետաքրքրութեան համար։

Յաւելում թէ՝ այս բեկուագրոյ օրինակն ևս ուղարկած լինելով Հա-
 յաղի Հնագէտ Պրաֆէսոր Պ. Քերովը պատկանեանին՝ ստացայ նո-
 րանից թարգմանութիւնն օրպէս այս բեկուագրոց, նոյնպէս և Օրդակ-
 լուայ մօտ եղած 9 տող բեկուագրոց *) թարգմանութիւնն միւնցն նա-
 մակի մէջ, որոյ օրինակն ևս ահա տամ խմբագրութեանդ ի տպա-
 գրութիւն պատմաբանից բաւականութեան համար։

Պ. Ք. Պատկանեանի նամակի պատմէնն այս է.

* Զերգ Սրբազնութիւն ևլն.

* Ստացայ Զեր Պեկտ. 1ին զրած նամակը և հետը Պուլի - ջանի 11
 տող արձանագրութեան օրինակը, Շատ գժուարութեամբ՝ բացի 3 տո-
 ուից, կարողացայ կարգալ, և ահա ուղարկում եմ Զեր թարգմանու-
 թիւնը եթէ հաճիլի է։ Այս է.

* Բազմազաւակ Աստուծոյ՝ Խալկեայ,
 Արքայն Արդիսիս առէ.

Ասի զգաւառն քաղաքին Ալէխու (?)
 Դնացի ի քաղաքէն Իստիմանու

Ե գաւառն Սաբապտին՝ Ցունի իշխանին.

(Որ այժմ է) (գժուարիմանալի ևն գծագրութիւնքն)
 Արդիսիսի արքայի, հզօր արքայի, արքայի
 Աշխարհին Բիայնայ, բնակելոյն ի քաղաքին
 Տուսպայ ։

* Այս է ահա զորա թարգմանութիւնը, ի հարկէ մերձաւորաբար-
 ձիշտ կարգալը և թարգմանելը միայն այն ժամանակ կլինի, երբ նիւթը
 աւելանայ, այսինքն՝ նոր և բազմատող արձանագրութիւններ գտնվեն
 առատութեամբ։

* Խոհ Օրդակուինի թարգմանութիւնը այս է.

* Մերձեցայ հզօր զօրութեան Աստուծոյն Խալկեայ,

(*) Օրդակուայ 9 տող բեկուագրին տպած է Արտաստ ամսագրի 1883 թուի
 Գելու, ամսում, յերես 534։

Որ ետ զգաւառս իշխանին Կուագայի
Ի պարգև զաւակացն Արդիստիսի,
Պատարագօք մերձեցայ առ Խալղի,
Արդիստիս ասէ. առի զքաղաքն Կարու (?)
Իշխանին Կուգայի :

* Խնդրեմ գրէք մանրամասնաբար, ո՞րտեղ Են այդ Օրդակլուն և
Դուլի - ջանն *): Ես քարտէսի վերայ չկարողացայ զտնել. բայց անշուշտ
Հարկաւոր է իմանալ ճիշտ տեղը ամեն նորագիւտ արձանագրութեան.
որովհետեւ նախ՝ կիմացվի մինչեւ ի՞նչ տեղ է հասած եղել Վանի թա-
գաւորաց իշխանութիւնը, և Երկրորդ՝ գուցէ կտեղեկանակ ժամանա-
կով՝ թէ այժմ մեր պատմութեանց յայտնի քաղաքները և գիւղերն
ինչ անուն են ունեցել Ասորեստանեաց ժամանակն **):

* Եթէ Զեր սէրը գէպի ազգային հնութիւնները կարողանայիք ներ-
շնչել Հայ գիւղերի վարժապետներին, ինչպէս որ այս անդամ արել էք,
գուցէ Զեր գիւտերը բաղմանային և մեր նորատունկ Հայ գիտութեան
մեծ օգուտ և արդիւնք բերէին, Այս 14 արձանագրութիւններից ար-
դէն պարզ երեսում է, որ դոցա տեղը շատ պէտք է եղած լինի. և
եթէ լաւ օրոնուի, գուցէ անակնկալ և անսպասելի գիւտեր անէք, Ես
գիտեմ, որ այդպիսի խուզարկութիւնները անշուշտ նիւթական միջոց-
ների են կարօտ բայց ի՞նչ արած, որ ազգը գեռ այսպիսի ծառայու-
թիւնները չի զնահատում, Բայց չպէտք է կորցնել յօյսը, հաւաստի
եմ, որ այդ շատ չի տեիլ և սէրը գէպի հնութիւնները կտարածվի
մեր երիտասարդների մէջ, Ինչ և իցէ, Այս օրերս Զեր արձանագրու-
թեանց օրինակները կուզարկեմ Բէլզիա օրագրումը տպելու համար.
Իսկ Զեր Սրբազնութիւնից կտպասեմ նոր արձանագրեր:

* Աւզարկեցի մի Ռուսերէն տետրակ ևս «Վանայ բնեսագրութիւնը »
վերնագրով, որ այժմ ստացած կլինիք:

* Սպասելով Զեր կողմից նոր ուրախառիթ նամակների —

* Մնամ խորին յարգանօք ելն.

* Քերովբէ պատկանեան » .

28 Դեկտեմբեր 1883

Ա. Գէորգէսս-բէ:

* 15 այս Յունվարի 1884 ամի, Նամակաւում պլ. Պատկանեանցի կա-
րեռը հարցմանցն պատասխանեցի:

ՄԵՍՐՈՎԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ

(*) Օրդակլու գիւղն գտանի Ծաղկաձոր (Դարբաշիսկ) գտաւուի մէջ. Մեւանոց հո-
վի տրեւմուտան եղբին. իսկ Դուլի - ջան գիւղն Շիրակ գտաւուի մէջ. եւ երկուսն եւս
կարելի է գտնիլ Երեւանաց հանագի քաղաքի քաղաքափի մէջ:

(**) Արգեատիուը Ասորւց թագաւոր չէք, այլ Հայոց. որ ըստ Պաղպացի Աշուամունի
է կունակ թագաւորն մեր 630 ամօք նախ քան դբրիստոս. (ահա Բաղմալէան Վե-
նետիկոց 1881. յերես 12. ի ծանօթութեան Ա. գլուց ընտիր գրութոց Հ. Բ. Ասրդ-
պետն, վերմագրավը ո Հայոց ազգն եւ իւր առ մարդկութիւնն ըստծ ոգտանիեն) :

Ա. Ե. Ա.

ՑՈՒՑԱԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



